

## 1.10. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայության տակ թվով 33 բուժհաստատություն, որից՝ հիվանդանոց - 2, պոլիկլինիկա - 5, ընտանեկան բժշկության կենտրոն-1, ծննդատուն - 2, դիսպանսեր - 1, բժշկական կենտրոն - 3, վերականգնողական կենտրոն-1, գյուղական բժշկական ամբուլատորիաներ - 6, գյուղական առողջության կենտրոններ - 9, շտապ բուժօգնության կայան - 1, արյան փոխներարկման կայան - 1, պաթոլոգո-անատոմիական լաբորատորիա - 1 :

Գյուղական բժշկական ամբուլատորիաներին ամրակցված են 119 բուժակ-մանկաբարձական կետեր:

Մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ 2014թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ հաճախումների թիվը կազմել է 522555, պետպատվերի շրջանակներում իրականացված բժշկական ծառայությունների ծավալը կազմում է 3մլրդ. 464մլն.422 հազ.դրամ, մատուցված վճարովի ծառայությունների ծավալը 580մլն.372 հազ.դրամ:

ՀՀ Շիրակի մարզպետի միջնորդությամբ թվով 118 հիվանդներ, որոնք ընդգրկված չեն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման առանձին /հատուկ/ խմբերում, սակայն գտնվում են սոցիալական խիստ ծանր պայմաններում, ստացել են անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն:

2014թ-ի մարտ- ապրիլ ամիսներին կանանց միամսյակի կապակցությամբ կազմակերպվել է <<բաց դռների օր>>, Երևանի բժշկական կազմակերպությունների բժիշկ մասնագետների մասնակցությամբ, որի ընթացքում հետազոտվել և բուժում են ստացել ՀՀ Շիրակի մարզի 1800 կին ազգաբնակչություն:

<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ում պարբերաբար կազմակերպվել է <<բաց դռների օրեր>>՝ Երևանի տարբեր բժշկական կազմակերպությունների բժիշկ մասնագետների մասնակցությամբ:

<<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ում նորագույն բժշկական սարքավորումները հնարավորություն ստեղծեցին մարզի բնակչությանը ստանալու որակյալ բժշկական օգնություն և սպասարկում: 2014թ-ի մայիս ամսից հիմնական դրույքաչափով աշխատանքի է ընդունվել ինվազիվ սրտաբան, որն իրականացնում է կորոնարոանգիոգրաֆիա և սրտի ստենդավորում:

Հիմնովին վերանորոգվել է <<Մարալիկի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի մասնաշենքը:

Ընթացքի մեջ է <<Պաթուլոգոանատոմիական լաբորատորիա>> ՓԲԸ-ի շենքի կառուցման շինարարական աշխատանքները:

Առողջապահության նախարարությունից 2014թ. ընթացքում կենտրոնացված կարգով և մարդասիրական ճանապարհով ստացվել է 199մլն974հազ400 դրամի դեղորայք և բժշկական պարագաներ:

2014թ. ընթացքում <<Ջերմուկ>>, <<Արզնի>>, <<Գանձաղբյուր>>, <<Վանաձոր>> առողջարանների ուղեգրեր են տրամադրվել մարզի 99 հաշմանդամների: